

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱԶՄԱՎԵՐՊՎԱԾ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքների ամբողջական պատկերը հասկանալու, ոճրագործության դրվագները հստակեցնելու, հայ ժողովրդին ամբողջությամբ ղնչացնելու՝ առկա հատուկ մտադրության հիմնավորելու, Հայոց ցեղասպանության համատեքստային տարրի առկայությունը վերհանելու տեսանկյունից՝ Մեծ եղեռնը վերապրածների վկայությունները հավաքագրելուն, ի մի բերելուն և համակարգելուն ուղղված աշխատանքներն իրավական առումով անգնահատելի նշանակություն ունեն:

Նման վավերագրերի իրավաբանական նշանակությունը չի կորցրել իր արդիականությունը նույնիսկ այսօր՝ Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի նախաշնչին: Ավելին՝ կարելի է վստահաբար պնդել, որ վերջին շրջանում տեղի ունեցած զարգացումները՝ տարբեր պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման և դատապարտման գործընթացի ակտիվացումը, Հայոց ցեղասպանության ժխտման համար իրավական պատասխանատվության նախատեսմանն ուղղված օրինագծերի ընդունման փորձերը, Հայոց ցեղասպանությանն առնչվող հարակից իրավական պահանջների (ապահովագրական, գույքային և այլն) բավարարումը՝ տարբեր երկրների դատական մարմինների շրջանակներում, Հայոց ցեղասպանության հիմնահարցը, կարծես, կրկին վերադարձրել են իրավական տիրույթ: Անշուշտ, նման միտումները պայմանավորված են նաև համաշխարհային զարգացումներով՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանում «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի» հիման վրա նախաձեռնված դատավարություններով, միջազգային քրեական արդարադատության համակարգի կայացմամբ ու զարգացմամբ և այլ համանման գործընթացներով:

Նշված զարգացումներն առավել կարևորում են Հայոց ցեղասպանությանն առնչվող ապացուցողական նշանակություն ունեցող իրավական փաստաթղթերի և այլ համանման նյութերի վերհանումը և համակարգումը:

Նշված տեսանկյունից, 1916թ. Հայ Հեղափոխական Դաշնակցության Բաքվի կոմիտեի նախաձեռնությամբ՝ Հայոց ցեղասպանությունը վերապրած անձանց շրջանում կազմակերպված և անցկացված «փաստահավաք առաքելության» սույն ժողովածուի շրջանակներում ամփոփված արդյունքները, անկասկած, ունեն մեծ տեսագործական նշանակություն:

Ժողովածուում ամփոփված տեղեկությունները հետաքրքրություն են ներկայացնում, նախ և առաջ, Հայոց ցեղասպանության եղելությունն առավել հիմնավորելու և Հայոց ցեղասպանության համար Օսմանյան կայսրության իրավահաջորդին միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու համատեքստում:

Պետք է նշել, որ ժողովածուում արտացոլված վկայությունները ժամանակակից իմաստով համահունչ են վկաների (ականատեսների) կամ տուժողների ցուցմունքներին: Տվյալներ հաղորդողները, որպես կանոն, միաժամանակ և՛ ցեղասպանության այս կամ այն դրվագից տուժող անձինք են, և՛ այլոց նկատմամբ կատարվածի ականատես:

Սույն ժողովածուում արտացոլված վկայությունները կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության որակման համար իրավական նշանակություն ունեցող առնվազն հետևյալ փաստերն ապացուցելու համար.

1. Օսմանյան կայսրության և հարակից տարածքների հայ ազգային և կրոնական խմբի ամբողջությամբ ղնչացմանն ուղղված հատուկ մտադրություն:

2. Նշված մտադրության իրագործման նպատակով հետևյալ արարքների կատարումը.

ա. խմբի անդամների սպանություն,

բ. խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը, ներառյալ խոշտանգումների, բռնաբարության, սեռական բռնության ակտերը կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը, ներառյալ՝ բռնի դավանափոխությունը,

գ. խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

դ. երեխաների բռնի փոխանցումն այլ մարդկային խմբերի:

Նշված արարքները տեղի են ունեցել հետապնդվող խմբի դեմ ուղղված համանման վարքագծի ակնհայտ դրսևորման համատեքստում կամ իրենցից ներկայացրել են այնպիսի վարքագիծ, որն ինքնին կարող էր հանգեցնել նման ոչնչացմանը:

Վերը նշված ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկատվությունից գատ, ժողովածուում ամփոփված վկայություններն ունեն չափազանց մեծ նշանակություն Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերի բնակչության, ցեղասպանության ընթացքում զոհվածների, ստացած վնասվածքների հետևանքով հետագայում մահացածների, վիրավորների, խեղվածների և այլ տուժածների թիվը պարզելու համար:

Տվյալ վավերագրերը, անշուշտ, մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված նյութական վնասի ծավալները գնահատելու և հանրագումարի համար, քանի որ դրանցում ամփոփված են տվյալներ համապատասխան բնակավայրերի արտադրական միջոցների, տնտեսական կարողությունների, կրթօջախների, եկեղեցիների, այլ կառույցների, առկա մշակութային արժեքների, անասունների գլխաքանակի, ստացվող բերքի տեսակի և քանակի վերաբերյալ:

Պետք է նշել, որ շնորհիվ փաստահավաք խմբի անդամների կողմից մշակված հստակ հարցացուցակի՝ սույն ժողովածուում զետեղվել են նյութեր նաև Առաջին աշխարհամարտի սկզբին կամ դրա նախօրյակին Օսմանյան կայսրության կողմից որպես պատերազմական տուրք հայկական բնակավայրերից ստացված նյութական և ֆինանսական միջոցների մասին, ինչն իր հերթին կարող է օժանդակ նյութ հանդիսանալ հայկական բնակավայրերի տնտեսական կարողությունների ծավալը գնահատելու համար:

Սույն ժողովածուում տեղ գտած վավերագրերը կարևորվում են նաև Հայոց ցեղասպանության անմիջական իրագործողների ինքնությունը պարզելու տեսանկյունից, ինչը շատ անգամներ դուրս է մնում հայ հետազոտողների տեսադաշտից: Անշուշտ, ինչպես և ցանկացած այլ ցեղասպանության պարագայում, Հայոց ցեղասպանության դեպքում ևս դրա մեջ ներգրավված են եղել տասնյակ հազարավոր անմիջական իրագործողներ, որոնցից շատերի ինքնությունը նույնիսկ հնարավոր էլ չէ պարզել: Այդ իսկ պատճառով, որպես կանոն, թե՛ տեսական, թե՛ գործնական առումով, հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է ցեղասպանության կազմակերպիչների, գլխավոր իրագործողների ինքնությունը պարզելու և պատասխանատվության ենթարկելու վրա: Այս տեսանկյունից, սույն ժողովածուում ամբողջացված վկայությունները, որոնցում հիշատակվում են բազմաթիվ հանցագործների անուններ, լուրջ իրավական նշանակություն կարող են ունենալ Հայոց ցեղասպանությունն անմիջականորեն իրագործած անձանց ինքնությունը պարզելու համար, առնվազն այն բնակավայրերում, որտեղից դրանք ստացվել են, և, դրանով իսկ, առավել ամբողջական դարձնել Հայոց ցեղասպանության հարցում պատասխանատու անձանց շրջանակը:

Առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված վավերագրերը հավաքողները փորձել են աշխատել իրական փաստահավաք առաքելության կամ քննչական խմբի ձևաչափով, ինչն առավել արժևորել է ստացված վկայությունների իրավական նշանակությունը, քանի որ դրանցում մատնանշված փաստերը հասել են մեզ ոչ թե կցկտուր հուշերի միջոցով, այլ արդյունք են դարձել համակարգված մի գործընթացի, որը նպատակաուղղված է եղել ցեղասպանության փաստական հանգամանքները վերհանելուն, ի մի բերելուն և վերլուծելուն: Պատահական չէ, որ վկայություններից շատերում հատուկ առանձնացված է «ջարդ» ենթավերնագիրը:

Վավերագրերի բովանդակության վերլուծությունը թույլ է տալիս առնվազն եզրակացնելու, որ փաստահավաք առաքելությունը փորձել է պարզել համապատասխան բնակավայրի հայ ազգաբնակչության թվաքանակի, պատերազմի ժամանակ բնակավայրերից ստացված ռազմական տուրքի ծավալների, Օսմանյան բանակ զորակոչված հայ զինվորների թվի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նկարագրել կոտորածները, դրանց հաջորդած իրադարձությունների ընթացքը, ի մի բերել գաղթականների ժամանակավոր հանգրվանների վերաբերյալ տվյալները և այլն:

Բացի նշվածից, սույն վավերագրերի իրավական արժեքը, վկաների հաղորդած տեղեկությունների հավաստիությունը և վավերականությունն առավել մեծանում են հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց հավաքագրումը տեղի է ունեցել իրադարձություններից անմիջապես հետո, դրանք կամ անմիջականորեն շարադրված են վերապրողների կողմից, կամ վերադարձված են ըստ նրանց իսկ խոսքերի:

Նշված ժողովածուում արտացոլված նյութերը հետաքրքրական են նաև Հայոց ցեղասպանության մեջ Օսմանյան պետության պետական մարմինների, զինված ուժերի և ոստիկանության ներգրավվածության աստիճանը պարզելու և Օսմանյան կայսրության կենտրոնական ու տեղական իշխանությունների միջև հարաբերությունները հստակեցնելու տեսանկյունից:

Մեծ նշանակություն վավերագրերը կարող են ունենալ Հայոց ցեղասպանության համատեքստային տարրի վերհանման տեսանկյունից: Ժողովածուում զետեղված ցանկացած վկայություն ինքնին կարող է դիտվել որպես հաղորդում առանձին ավարտված հանցագործության մասին՝ սպանություններ, խոշտանգումներ, կտտանքներ, մարմնական կամ ֆիզիկական վնասվածների պատճառում, բռնաբարություններ և այլն, սակայն դրանք ամբողջականացվում են մեկ միասնական մտադրությամբ կատարված ցեղասպանության մեջ միայն այն պարագայում, երբ ի մի է բերվում ցեղասպանության համատեքստային տարրը, որի էությունը հանգում է նրան, որ վերը նշված արարքները պետք է կատարված լինեն համանման վարքագծի ակնհայտ դրսևորման համատեքստում, այլ կերպ ասած՝ փոխկապակցված լինեն միմյանց:

Այս տեսանկյունից նշված վկայությունների արժեքը, իրոք, անգնահատելի է, քանի որ դրանց վերլուծությունը թույլ է տալիս վերհանել Օսմանյան կայսրության և հարակից տարածքների հայ բնակչության նկատմամբ դրսևորվող համանման ցեղասպան վարքագծի ակնհայտ դրսևորումը: Վավերագրերում առկա՝ տարբեր վիլայեթներում գտնվող բնակավայրերից ստացված հայելային տեղեկությունները (զորակոչված հայ զինվորների նկատմամբ անմարդկային վերաբերմունք, հայերին նույնականացնելու համար մարդահամարի տվյալների օգտագործում, հայկական գյուղեր ներխուժում, կանանցից տղամարդկանց առանձնացում և ոչնչացում, բռնի դավանափոխություն, երեխաների ու կանանց բռնի փոխանցում այլ մարդկային խմբերի, զոհերի մերկացում և այլն) վկայում են այն մասին, որ Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում Հայոց ցեղասպանության մեջ ներգրավված անձինք գործել են ոչ թե միմյանցից ջոկ-ջոկ, առանց այլոց գործողությունների մասին տեղյակ լինելու, այլ փոխհամաձայնեցված եղանակով իրագործել են միասնական ցեղասպան մտադրությունը:

Անշուշտ, հարկ է նշել, որ ժողովածուում տեղ գտած վավերագրերի ապացուցողական նշանակությունը միօրինակ չէ: Դրանցից շատերը բավականին մանրամասն նկարագրում են իրադարձությունների ընթացքը, մատնանշում հանցագործություն իրականացնողներին, հիշատակում զոհվածների կամ մահացածների անունները, մյուսները, ընդհակառակը, վերացական բնույթ են կրում, կցկտուր են, հակիրճ: Նշված վկայություններին իրավական գնահատական տալու պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել նաև վկայություն տվողների տարիքային, սեռային, կրթական և այլ առանձնահատկությունները, միանշանակ պետք է հաշվի առնել այն հուզական վիճակը, որում գտնվել են վերջիններս իրադարձությունների ծավալման պահին կամ վկայություններ տալու ժամանակ:

Նախահարձակ լինելով Հայոց ցեղասպանության ժխտմանն ուղղված թուրքական պաշտոնական քարոզչամեթոդային կողմից սույն ժողովածուում զետեղված նյութերի ապացուցողական նշանակությունը, իսկությունը և հավաստիությունը քարկոծելու հավանական փորձերին՝ փորձենք ինքներս անդրադարձ կատարել դրանցում առկա «խոցելի» կողմերին՝ փարատելով դրանց ապացուցողական նշանակությունը նսեմացնող բոլոր կասկածները:

Նախևառաջ, պետք է նշել, որ սույն վավերագրերը թե՛ աշխարհագրական, թե՛ ժամանակագրական առումով վերաբերում են Հայոց ցեղասպանության միայն սկզբնական դրվագներին և փաստացիորեն ընդգրկում են տեղեկություններ միայն այն վայրերից, որոնք Առաջին աշխարհամարտի ընթացքում 1915-1916թթ. գտնվել են ռուսական զորքերի վերահսկողության ներքո կամ դրանց անմիջական հարևանությամբ և ընդգրկում են հիմնականում Հայոց ցեղասպանությունն այն վերապրածների վկայությունները, ովքեր ռուսական զորքի, այսպես կոչված, հուլիսյան նահանջի արդյունքում վերջիններիս հետ մեկտեղ գաղթել են Հարավային Կովկաս: Իհարկե, պետք է հաշվի առնել նաև այն կարևոր հանգամանքը, որ նշված վկայությունները ձեռք են

բերվել այն ժամանակահատվածում, երբ ցեղասպան մտադրությունն ավարտին դեռ չէր հասցված, և նույնիսկ տեղեկատվություն հավաքողները չէին կարող հստակ պատկերացում կազմել ողբերգության իրական բնույթի ու ծավալների մասին:

Երկրորդ, անտարակույս, ոչ ոք չի վիճարկում այն հանգամանքը, որ նշված վկայությունները ինքնաբերաբար չեն կարող ապացուցել Հայոց ցեղասպանության այս կամ այն դրվագին առնչվող փաստերը: Ապացույցների գնահատումը պետք է իրականացվի ապացույցների համակցության մեջ՝ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ վերլուծության հիման վրա: Հետևաբար, վկայակոչված փաստերը պետք է համադրվեն դրանք հավաստող այլ ապացույցների հետ, ինչպիսիք են, օրինակ, պաշտոնական դիվանագիտական նամակագրության նյութերը, պետության պաշտոնական փաստաթղթերը, ռազմական և այլ արխիվներում գետեղված տեղեկությունները, և բազմակողմանիորեն, լիովին ու օբյեկտիվորեն վերլուծվեն դրանց համակցությամբ:

Այս տեսանկյունից, մինչև նշված փաստաթղթերի իսկությունը, հավաստիությունը և վավերականությունն այն առումով վիճարկելը, որ վերջիններս միջնորդավորված են, միակողմանի են, վերացական և այլն, քննադատները պետք է հասկանան, որ դրանք սոսկ ուղղված են այն փաստերի ապացուցմանը, որոնք ապացուցվում են նաև բազմաթիվ այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով:

Անհրաժեշտ է անդրադառնալ վավերագրերում, հատկապես Վանի վիլայեթի տարբեր բնակավայրերի ականատեսներից ստացված տեղեկություններում պարբերաբար հիշատակվող ինքնապաշտպանական մարտերին կամ գործողություններին, ինչը կարող է պատրվակ դառնալ թուրքական քարոզչամեքենայի համար՝ հիմնավորելու այն կեղծ պնդումը, թե իբր հայերը զոհ են դարձել մտացածին «քաղաքացիական պատերազմի», որի ժամանակ զոհվել են նաև բազմաթիվ թուրքեր: Անդրադառնալով նշված հնարավոր փաստարկին՝ պետք է հստակորեն նշել, որ նույնիսկ քաղաքացիական պատերազմի առկայությունը չի կարող ինքնին ժխտել ցեղասպանության եղելության փաստը: Դրա վառ վկայություններն են 1994թ. Ռուսնդայում ծավալված իրադարձությունները, երբ ոչ միջազգային բնույթ ունեցող զինված ընդհարմանը զուգահեռ տեղի էր ունենում ցեղասպանություն: Այլ կերպ ասած, նույնիսկ քաղաքացիական պատերազմի տեսական հնարավորությունը չի բացառում ցեղասպանության իրագործման փաստը: Մինչդեռ Հայոց ցեղասպանության պարագայում ընդհանրապես չի կարող խուսք գնալ քաղաքացիական պատերազմի մասին, իսկ ինչ վերաբերում է ինքնապաշտպանական մարտերին կամ գործողություններին, ապա պետք է նշել, որ վերջիններս առկայությունը ևս որևիցե կերպ չի կարող ստվերել ցեղասպանության եղելության փաստը, այն պարզ պատճառով, որ հանցագործին դիմադրություն ցույց տալը կամ սեփական կյանքը կամ մերձավորներին փրկելու համար համապատասխան միջոցների դիմելը, նույնիսկ ինքնապաշտպանության կամ ապստամբության նախաձեռնումը չի կարող վերաորակավորել ցեղասպանության հանցակազմը՝ վերածելով այն որևէ այլ պատժելի կամ ոչ պատժելի արարքի: Նման ինքնապաշտպանության դեպքեր տեղի են ունեցել զրեթե բոլոր ցեղասպանությունների ժամանակ, երբ հետապնդվող մարդկային խմբերի հոծ բնակության վայրերում բռնկվել են ապստամբություններ կամ ինքնապաշտպանական գործողություններ են իրականացվել: Նույնիսկ Ողջակիզման պարագայում, մարդկությունն ականատես է դարձել ինքնապաշտպանության տարբեր դրվագների, որոնցից թերևս ամենահայտնին Վարշավայի գետտոյի՝ 1943թ. ապրիլի 19-ից մայիսի 16-ը տևած և արյան մեջ դաժանորեն խեղդված ապստամբությունն է: Ուստի, Հայոց ցեղասպանության իրագործման տարիներին տեղի ունեցած ինքնապաշտպանության դեպքերը, որոնց մասին բավականին հաճախ է հիշատակվում սույն ժողովածուում գետեղված վկայություններում, որևէ կերպ չեն կարող ստվերել կամ մթազնել Հայոց ցեղասպանության եղելության փաստը: Ընդ-

հակառակը, նման գործողությունների առկայությունը խմբի հետապնդման լավագույն վկայություններից մեկը կարող է հանդիսանալ:

Անփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք վստահաբար փաստել, որ սույն ժողովածուում ներառված վկայությունները հսկայական հետազոտական նյութ են պարունակում: Պատմաքաղաքական մեծ նշանակության հետ մեկտեղ, նշված վկայությունները չափազանց մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել իրավական հետազոտություններ իրականացնողների համար, քանզի վերջիններս թույլ են տալիս հստակեցնելու Հայոց ցեղասպանությունը կազմող դրվագներում ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի հոդված 2-ում ամրագրված հանցագործության հանցակազմի օբյեկտիվ կողմի տարրերը, վերհանել ցեղասպանության իրագործման հատուկ մտադրությունը և ի մի բերել ցեղասպանությունը կազմող տարրեր դրվագների միջև առկա համատեքստային կապը:

Վլադիմիր Վարդանյան